82

ՀԵ 229, Էլմ. 180, 2 Տիմ.1:12

1. Օրհնյալ երաշխիք՝ իմս է Հիսուս,
Ո՞հ, այս խորհուրդը ինչ քաղցր է հոգվոյս,
Փրկության ժառանգ՝ Տերոջն եմ ես,
Իր արյունով՝ սրբված մեղքերես:

Պիտի պատմեմ մինչ շունչս վերջին
Ու երգեմ սերն անհուն իմ Փրկչին:

2. Իրն եմ ես, Ան՝ իմ Տեր և Արքա,
Կզգամ Իր փառքը անձիս մեջ ներկա,
Սուրբ հրեշտակներ, գալով երկնքեն,
Ծնորհաց սիրո երգ կմրմնջեն:

3. Ալ զիս հանձնած եմ Անոր բազկաց,
Հույժ երջանիկ եմ, անվախ, անկասկած,
Իր բարությամբ է լեցուն հոգիս,
Միակ Իր սերը նյութ է երգիս: